ՍԱՏՐԱՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՐՈԴՈՏԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ (ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ)

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ԽՈՐԻԿԵԱՆ
hovhkhor78@mail.ru

Դարեհ Ա. Վշտասպորդին (Ք.ա. 522-486), յաղթելով իշխանութեան համար մղուած պայքարում եւ վերականգնելով Պարսից Տէրութիւնը, այն բաժանում է 20 սատրապութիւնների[1]: Սատրապութիւնների ցանկը պահպանուել է Հերոդոտոսի աշխատութիւնում[2], սակայն ըստ որոշ ուսումնասիրողների ցուցակը չի համապատասխանում պարսից արքաների արձանագրութիւններում յիշատակուող երկրների հերթականութեանը: Խնդիրն այն է, որ սեպագիր արձանագրութիւններում՝ ի դէմս թուարկուող երկրների, մասնագիտական գրականութեան մէջ փորձել են տեսնել Աքեմէնեան Պարսկաստանի վարչական բաժանման արտացոլումը: Օրինակ, տարակարծութիւնների տեղիք կարող է տալ այն հարցը, թէ ինչու՞ Պարթեւաստանը, Արէյան, Սոգդը եւ Խորեզմը ընդգրկուած են ԺԶ. սատրապութեան մէջ, երբ արձանագրութիւններում այդ երկրները յիշատակուած են առանձին-առանձին: Այս եւ այլ անհամապատասխանութիւնները, բնականաբար, պատճառ կը հանդիսանան զգուշութեամբ եւ վերապահութեամբ քննելու Հերոդոտոսի տեղեկութիւնները:

Ոմանք, հերոդոտեան ցուցակն համարել են Հերոդոտոսին կամ նրա աղբիւր Հեկատէոսին յայտնի էթնիկական եւ աշխարհագրական անունների կամայական հաւաքածու[3]: Որոշ ուսումնասիրողներ էլ կարծում են, որ արձանագրութիւններում թուարկուող երկրները ներկայանում են որպէս պատմամշակութային ընդհանրութիւններ, որոնք միշտ չէ, որ պէտք է համապատասխանէին վարչական բաժանումներին[4], յատկապէս, եթէ նկատի ունենանք, որ Բեհիսթունի բարձրաքանդակներում ընդգծուած են խռովարար, ինքնակոչ թագաւորների ազգագրական նկարագրի առանձնայատկութիւնները: Կարծիք է յայտնուել նաեւ, թէ Հերոդոտոսը նկարագրել է իր ապրած ժամանակաշրջանի պարսից պետութեան բաժանումը, որը համընկնում է Արտաքսերքսէս Ա.ի կառավարման ժամանակաշրջանին (Ք. ա. 465-424)[5]: Բազմաթիւ ուսումնասիրողների ենթադրութեամբ, Հերոդոտոսին աղբիւր է ծառայել Հեկատէոսը, չնայած Հերոդոտոսը նոյնպէս կարող էր կատարել որոշ յաւելումներ, ընդ որում Հեկատէոսի կամ Հերոդոտոսի ցուցակի հիմքում ընկած է մի պարսկական պաշտօնական աղբիւր[6]: Սակայն կայ նաեւ տեսակէտ, թէ Հերոդոտոսը տուեալ հատուածը շարադրելիս ոչ մի պարսկական պաշտօնական աղբիւր էլ չի ունեցել, այլ օգտուել է Հեկատէոսի երկից եւ քարտէզից, որտեղ ներկայացուած են Ասիան բնակեցրած տարբեր ժողովուրդներ[7]:

Իգոր Դիակոնովի կարծիքով, Հերոդոտոսի ցուցակում սատրապութիւնները թուարկուած են նախ Մարական Տէրութեանը, յետոյ Աքեմէնեան Պետութեանը միացման հերթականութեամբ[8]: Իրանագէտ Էրնստ Հերցֆելդը գտնում է, որ Հեկատէոսը ունեցել է մինչեւ Ք.ա. 514 թուականը կազմուած սատրապութիւնների ամբողջական ցուցակի ընդօրինակութիւնը, իսկ Հերոդոտոսի մօտ ցուցակը ներկայացուած է աղճատուած, առանձին մէջբերումների տեսքով, չնայած դրանք պարունակում են սատրապութիւնների պաշտօնական անուանումները եւ հիմք են տալիս պատկերացում կազմել Հեկատէոսի ցուցակի մասին[9]:

Այս տարակարծութիւնների պատճառն, անշուշտ, այն է, որ պարսկական պաշտօնական աղբիւրը մեզ չի հասել: Մեր կարծիքով, հարցի լուծման բանալին առկայ է հենց Հերոդոտոսի երկում: Սակայն, ելնելով քննութեան շահեկանութիւնից, նախ ամբողջութեամբ մէջբերենք յոյն պատմիչի երկի այն հատուածը, որտեղ նկարագրւում են Աքեմէնեան Պարսկաստանի վարչական միաւորները՝ սատրապութիւնները: Այսպէս, Հերոդոտոսը գրում է. *«Հոնիացիներից, Ասիայի մագնէսեաններից, էոլեաններից, կարիացիներից, լիւկիացիներից եւ միլիւացիներից եւ պամփիւլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանուել էր մէկ ընդհանուր հարկ, ստացւում էր չորսհարիւր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպէս* ***առաջին*** *(*այս եւ յաջորդ ընդգծումները մերն են - Յ.Խ.*) նահանգ: Միւսիացիներից, լիւդիացիներից, լասոններից, կաբալներից եւ հիւտէններից [ստացւում էր] հինգհարիւր տաղանդ. այս էլ* ***երկրորդ*** *նահանգն էր: Դէպի ներս նաւարկելիս աջակողմեան հելլեսպոնտոսցիներից, փռիւգիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիններից եւ սիրիացիներից [ստացուող] հարկը երեքհարիւր վաթսուն տաղանդ. այս նահանգը* ***երրորդն*** *էր: Կիլիկեցիները տալիս էին երեքհարիւր վաթսուն սպիտակ ձի, տարուայ իւրաքանչիւր օրուայ համար մէկ ձի, եւ հինգհարիւր արծաթ տաղանդ, որից հարիւրքառասունը ծախսւում էր կիլիկեան երկիրը պահպանող հեծելազօրի վրայ, իսկ երեքհարիւր վաթսունը հասնում էր Դարեհին: Սա* ***չորրորդ*** *նահանգն էր: Պոսիդէոն քաղաքից, որը հիմնել է Ամփիարաոսի որդի Ամփիլոքոսը Կիլիկիայի եւ Սիրիայի սահմանին, մինչեւ Եգիպտոս ընկած երկիրը, բացի արաբների երկրից, որն ապահարկ էր, ստացւում էր երեքհարիւր յիսուն տաղանդ հարկ: Այս նահանգի մէջ էին ամբողջ Փիւնիկիան եւ Պաղեստինեան կոչուած Սիրիան ու Կիպրոսը: Սա* ***հինգերորդ*** *նահանգն էր: Եգիպտոսից եւ Լիբիայի, Կիւրենէի ու Բարկայի՝ Եգիպտոսին յարած մասերից, որոնք ընդգրկուած էին Եգիպ-տական նահանգի կազմում, ստացւում էր եօթհարիւր տաղանդ, չհաշ-ուած Մոյրիս լճի ձկնորսութիւնից ստացուող արծաթը: Ահա այդ արծա-թից եւ իբրեւ հարկ վերցուող ցորենից բացի [այդ երկրից] ստացւում էր*

եօթհարիւր տաղանդ: Քանզի Մեմփիսի սպիտակ բերդում հաստատուած պարսիկների եւ նրանց վարձկանների համար վերցուում էր տասներկու բիւր մեդիմնոս[10] ցորեն: Սա ***վեցերորդ*** *նահանգն էր: Սատտագիւտները, գանդարիները, դադիկները եւ ապարիւտները համատեղ վճարում էին [տարեկան] հարիւրեօթանասուն տաղանդ հարկ: Սա* ***եօթերորդ*** *նահանգն էր: Սուսայից եւ կիսսիէցիների երկրի մնացած մասից վերցուում էր երեքհարիւր տաղանդ: Սա* ***ութերորդ*** *նահանգն էր: Բաբելոնից եւ մնացեալ Ասորեստանից ստացուում էին հազար տաղանդ եւ հինգհարիւր ներքինիացուած տղաներ. սա* ***իններորդ*** *նահանգն էր: Ազբատանան, Մեդիայի մնացեալ մասը, պարիկանիները եւ օրթոկորիբանտիները վճարում էին չորսհարիւր յիսուն տաղանդ. սա* ***տասներորդ*** *նահանգն էր: Կասպերը, պաուսիկները, պանտիմաթները եւ դարէյտները, մէկ նահանգ կազմած, վճարում էին երկուհարիւր տաղանդ: Սա էլ* ***տասնմէկերորդ*** *նահանգն էր: Բակտրիացիներից մինչեւ Այգլերի [երկիրը բնակուողները] վճարում էին երեքհարիւր տաղանդ հարկ. սա էլ* ***տասներկուերորդ*** *նահանգն էր: Պակտիւիկէից, արմէններից եւ հարեւաններից մինչեւ Եուքսինեանը ստացուում էր չորսհարիւր տաղանդ. սա* ***տասներեքերորդ*** *նահանգն էր: Սագարտիները, սարանգները, թամանները, ուտիները, միկերը եւ Կարմիր Ծովում գտնուող կղզիների բնակիչները, որտեղ արքան բնակեցնում է, այսպէս կոչուած, տեղահանուածներին, այս բոլորը վճարում էին վեցհարիւր տաղանդ հարկ. սա* ***տասնչորսերորդ*** *նահանգն էր: Սակերը եւ կասպերը վճարում էին երկուհարիւր տաղանդ. սա* ***տասնհինգերորդ*** *նահանգն էր: Պարթեւները, քորասմները, սոգդերը եւ արէյները վճարում էին երեքհարիւր տաղանդ. սա* ***տասնվեցերորդ*** *նահանգն էր: Պարիկանիները եւ Ասիայի եթովպացիները վճարում էին չորսհարիւր տաղանդ. սա* ***տասնեօթերորդ*** *նահանգն էր: Մատիէնների, սասպէյրների եւ ալարոդների վրայ սահմանուած էր երկուհարիւր տաղանդ հարկ. սա* ***տասնութերորդ*** *նահանգն էր: Մոսքերի, տիբարէնների, մակրոնների, մոսսինոյկների եւ մարերի վրայ սահմանուեց երեքհարիւր տաղանդ [հարկ]. սա* ***տասնիններորդ*** *նահանգն էր: Իսկ հնդիկները, լինելով մեզ յայտնի ազգերի մէջ բոլորից առաւել մեծաթիւ, պարտաւոր էին, միւսների հետ համեմատած, բոլորից առաւել հարկ վճարել՝ երեքհարիւր վաթսուն տաղանդ ոսկէ աւազ. սա քսաներորդ նահանգն էր»*[11]:

Այսպիսով, Հերոդոտոսի ցուցակում, 20 սատրապութիւնների կազմում յիշատակւում են Պարսից տէրութեան մէջ մտնող շուրջ 70 էթնոսներ եւ երկրներ, այն դէպքում, երբ Բեհիսթունի արձանագրութիւնում թուարկուած են 23 երկրներ: Այդ երկրներն են Պարսքը, Էլամը, Բաբելոնիան, Ասուրեստանը, Արաբիան, Եգիպտոսը, այն երկրները, որոնք ծովի մօտ են, Սարդիսը, Հոնիան, Մեդիան, Արմինան, Կապադովկիան,

Պարթեւաստանը, Դրանգիանան, Արէյան, Խորեզմը, Բակտրիան, Սոգդիանան, Գանդարան, Սկիւթիան, Սատտագիւտիան, Արախոսիան, Մական[12]: Այս երկրները աշխարհագրօրէն լրիւ կամ մասամբ համապատասխանում են հերոդոտեան ցուցակի հետեւեալ սատրապութիւններին. Հոնիան համապատասխանում է Ա., Սարդիսը՝ Բ. սատրապութեանը, Գ. սատրապութեան էթնոսների շարքում սիրիացիների յիշատակումը թոյլ է տալիս Կապադովկիան համապատասխան համարել այս սատրապութեանը, Ասուրեստանը՝ Ե., Եգիպտոսը՝ Զ., Սատտագիւտիան, Գանդարան՝ Է., Էլամը՝ Ը., Բաբելոնիան՝ Թ., Մեդիան՝ Ժ., Բակտրիան՝ ԺԲ., Արմինան՝ ԺԳ., Դրանգիանան՝ ԺԴ., Սկիւթիան՝ ԺԵ., Պարթեւաստանը, Խորեզմը, Սոգդիանան, Արէյան ամբողջովին՝ ԺԶ., Մական՝ ԺԷ.: Պարսքը որպէս ապահարկ երկիր Հերոդոտոսը չի նշում սատրապութիւնների թւում[13]: Իսկ «tyaiy drayahyā»՝ «այն երկրները, որոնք ծովի մօտ են» արտայայտութիւնը, մեր կարծիքով, աշխարհագ-րօրէն կարող է համապատասխանել Փոքր Ասիայի հարաւարեւելեան ափամերձ անկիւնին, աւելի ստոյգ Կիլիկիային՝ Դ. սատրապութեանը, եւ, հնարաւոր է, նաեւ Կիպրոսին:

Մի առիթով մենք հիմնաւորել ենք կասպ-վրկան նոյնացման տեսակէտը[14], եւ ելնելով Բեհիսթունի արձանագրութեան այն յիշատակումից, թէ Պարթեւաստանում եւ Վրկանում ապստամբութիւնը ճնշելուց յետոյ Դարեհը յայտարարում է, որ այդ է իր կատարածը Պարթեւաստանում[15], նշանակում է, որ Վրկանը մտել է Պարթեւաստանի կազմի մէջ: Սրանից կարելի է եզրակացնել, որ Պարթեւաստանը համապատասխանում է նաեւ ԺԱ. սատրապութեան տարածքին (չնայած, որ Դարեհի վարչական վերակառուցումներից յետոյ այդ նոյնացումն արդէն բացառւում է): Նոյն տրամաբանութեամբ Արախոսիան պէտք է հանդէս գար ինչ-որ երկրի անուան տակ եւ այդ երկիրը Սատտագիւտիան է: Դարեհը Սաթագուշը յայտարարում է ապստամբ երկրների թւում[16], սակայն Սաթագուշի մասին այլ տեղեկութիւններ չի հաղորդում եւ, ընդհակառակը, խօսում է Արախոսիայում տեղի ունեցած ապստամբական գործողութիւնների մասին, որտեղ Վահեազդատան բանակ էր ուղարկել Արախոսիայի սատրապ Վիուանայի դէմ կռուելու համար[17]: Ճիշտ է, Դարեհը Արախոսիայում ապստամբութիւնը ճնշելուց յետոյ յայտարարում է, որ այդ է իր կատարածը Արախոսիայում (այսինքն՝ կարելի էր սպասել Սաթագուշում, ինչպէս Պարթեւաստանի դէպքում), սակայն կարելի է ենթադրել, որ Արախոսիան եւս աշխարհագրօրէն համապատասխանում է Է. սատրապութեանը, ինչպէս Սատտագիւտիան, Գանդարան, եւ, ըստ էութեան, Դարեհը Արախոսիան թողեց այս սատրապութեան կազմում: Համեմատութեան համար նշենք, որ Բակտրիան էլ չի յիշատակւում Դարեհի դէմ ապստամբած երկրների շարքում, բայց Մարգիանայում ապստամբու-

թիւնը ճնշելուց յետոյ Դարեհը յայտարարում է, որ այդ է իր կատարածը Բակտրիայում[18]: Միաժամանակ, հարկ է նշել, որ Բակտրիայի կազմում հանդէս եկող Մարգիանան նոյնպէս չի յիշատակւում Հերոդոտոսի կողմից: Մական նոյնացրեցինք ԺԷ. սատրապութեանը, բայց բացառուած չէ, որ Մական համապատասխանէր նաեւ ԺԴ. սատրապութեան միւկերին:

Մեր քննութեան համար կարեւոր են նաեւ Հերոդոտոսի հետեւեալ տեղեկութիւնները: Պատմիչը, նշելով հարկատու ցեղերին ու ժողովուրդներին, գրում է, որ *«ահա այս հարկերն էին գալիս Դարեհին Ասիայից եւ Լիբիայի մի փոքր հատուածից:* ***Ժամանակ անց հարկ է ստացւում նաեւ կղզիներից ու Եւրոպայում մինչեւ Թեսալիա*** *(*ընդգծումը մերն է - Յ.Խ.*) ապրողներից»*[19]: Այս վերջին տեղեկութեան մէջ «ժամանակ անց»ը ցոյց է տալիս, որ մինչ յունական կղզիների, Թրակիայի ու Մակեդոնիայի նուաճումը, Դարեհ Ա.ի վարչական վերափոխումներն արդէն կատարուած իրողութիւն էին, եւ այդ իրողութիւնն արտացոլուած էր Հերոդոտոսի մօտ պահպանուած սատրապութիւնների ցուցակում: Յունական կղզիները՝ Սամոսը, Լեմնոսը, Քիոսը, նուաճուել են մօտ Ք.ա. 517ին, եւ մօտաւորապէս Ք.ա. 517ին նուաճուել է նաեւ Հնդկաստանի հիւսիսարեւմտեան մասը[20]:

Մ. Ա. Դանդամաեւը Դարեհի վարչա-դրամականը[21]: Բեհիսթունի արձանագրութիւնն աւարտուել է Ք.ա. 518ին[22], որտեղ Հնդկաստանը, Մակեդոնիան, Թրակիան յիշատակուած չեն: Հնդկաստանը յիշատակւում է Դարեհ Ա.ի Պերսեպոլիսեան *Ե.* կոչուած արձանագրութիւնում[23], իսկ Դարեհ Ա.ի Նաղշէ Ռոստամի *Ա.* կոչուած արձանագրութիւնում արդէն Հնդկաստանը եւ Մակեդոնիան ու Թրակիան ընդգրկող Սկուդրա սատրապութիւնը յիշատակւում են միասին[24]: Սա նշանակում է, որ Դարեհի կողմից Հնդկաստանի նուաճումը աւելի վաղ է տեղի ունեցել, Եգէական ծովի նշուած կղզիների հետ միաժամանակ, քանի որ վերջիններս ներկայանում են «Ionians who are of the mainland»[25] արտայայտութեան տակ: Մեր կարծիքով, Նաղշէ Ռոստամի արձանագրութիւնը արտացոլում է Դարեհին հպատակ երկրների ամբողջական պատկերը, եւ թերեւս այս պատկերը հիւսիսմերձսեւծովեան սկիթների դէմ Դարեհի կատարած արշաւանքին[26] յաջորդած պատմական իրողութիւնն էր: Իսկ սա արդէն նշանակում է, որ ո՛չ Բեհիսթունի, ո՛չ Նաղշէ Ռոստամի եւ ո՛չ էլ ընդհանրապէս միւս հին պարսկական արձանագրութիւնները չեն արտացոլում Աքեմէնեան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգը: Եթէ Հնդկաստանը նուաճուել է Ք.ա. 517ի մօտերքը, այսինքն՝ Բեհիսթունի արձանագրութիւնը գրուելուց յետոյ, եւ արդէն իսկ որպէս առանձին սատրապութիւն առկայ է սատրապութիւնների հերոդոտեան ցուցակում, նշանակում է, որ Դարեհի վարչական վերափոխումներն իրագործուել են մինչեւ հիւսիսմերձսեւծովեան սկիթների դէմ կատար-

ուած արշաւանքը, քանի որ հենց Հերոդոտոսը, թուարկելով սատրապութիւնները, վերջում աւելացնում է, որ ժամանակ անց հարկեր են ստացւում նաեւ կղզիներից եւ Եւրոպայի մի մասից:

Ք.ա. մօտ 512ին Մակեդոնիան եւ Թրակիան կազմում են մէկ սատրապութիւն՝ Սկուդրա անուանումով[27], այն դէպքում, երբ համապետական բնոյթի վարչական վերափոխումներն արդէն կատարուել էին: Աւե-լի ուշ նոյնպէս տեղի էին ունենում վարչական փոփոխութիւններ պետութեան ներսում: Այսպէս, օրինակ, Դարեհ Ա.ի ժամանակ Փոքր Ասիան բաժանուած էր 4, իսկ Դարեհ Գ.ի օրօք՝ 7 սատրապութիւնների: Դարեհ Ա.ի մահից շատ չանցած Վրկանն անջատւում է Պարթեւաստանից եւ վերածւում առանձին սատրապութեան: Ք.ա. մօտ 508ին Գանդարան՝ որպէս առանձին սատրապութիւն, անջատւում է Բակտրիայից: Եղել է նաեւ հակադարձ երեւոյթը. Ք.ա. Դ. դարում Էբիրնարին եւ Կիլիկիան միաւորւում են մէկ սատրապութեան մէջ[28]: Հաւանաբար, նոր սատրապութիւնների առաջացումը եւ հների վերաձեւումը չէր ուղեկցւում նոր եւ համապատասխան համակայսերական հրամանագրերով (կամ էլ այդ հրամանագրերը մեզ չեն հասել) եւ ունէր տեղական նշանակութիւն: Այդ իսկ պատճառով հերոդոտեան ցուցակի հիմքում ընկած վարչական վերակազմութեան վերաբերեալ պաշտօնական աղբիւրը Աքեմէնեան արքունիքի կողմից չի ենթարկուել լրացումների եւ փոփոխութիւնների, այսինքն՝ Դարեհից յետոյ հանդէս եկող գահակալները չեն ձեռնարկել համապետական մակարդակի վարչական վերափոխումներ: Սակայն, պէտք է ուշադրութիւն դարձնել մի հանգամանքի վրայ, որտեղ, ըստ էութեան, կրկին արտացոլուած է Աքեմէնեան Պարսկաստանի սատրապական բաժանման պատկերը: Վերջինս, կարծում ենք, իր արտացոլումն է գտել Քսերքսէսի Հելլադա արշաւող բանակի նկարագրութեան մէջ, որի հիմքում, դատելով Հերոդոտոսի տեղեկութիւնից, ընկած է պարսկական պաշտօնական աղբիւրը, քանի որ ինչպէս հաղորդում է պատմիչը, Քսերքսէսի հրամանով եւ ուղղակի ներկայութեամբ, գրագիրները գրի են առնում արշաւանքին մասնակցող բոլոր ազգութիւնների անունները, որոնք տրամադրել էին ցամաքային եւ ծովային ռազմական ուժեր[29]: Ստորեւ՝ արշաւանքին մասնակցող այն բոլոր ժողովուրդները[30], որոնք յիշատակուած են նաեւ սատրապական ցուցակում եւ տեսնենք այն փոփոխութիւնները, որոնք կը յայտնաբերուեն քննութեան ընթացքում:

Այսպէս, Հերոդոտոսը արեւմտեան ժողովուրդներից նախ յիշատակում է պափլագոնացիներին, որոնց նմանութեամբ զինուած էին լիգիացիները, մատիէնները, մարիանդինները, սիրիացիները: Այնուհետեւ ռազմական առումով փռիւգիացիներն ու արմէնները հանդէս են գալիս մէկ հրամանատարութեան ներքոյ: Լիւդիացիներն ու միւսիացիները յիշատակւում են Արտափրենէսի հրամանատարութեան տակ: Ասիայի

թրակացիներին առաջնորդում էր Արտաբանոսի որդի Բասսակէսը: Յետոյ նշւում են պիսիդիացիները: Կաբալներին եւ միլիացիներին առաջնորդում էր Բադրէսը, մոսքերին, տիբարէններին՝ Արիոմարդոսը, մակրոններին եւ մոսսինոյկներին՝ Արտայուկտէսը: Հետեւակ զօրքի մէջ յիշատակւում են մարերը, կոլխերը, ալարոդները, սասպէյրները, Կարմիր Ծովի կղզիաբնակները: Դատելով բանակի նկարագրութիւնից՝ իւրաքանչիւր ցեղ յիշատակուած է տէրութեան մէջ ունեցած ըստ իր նշանակութեան: Ըստ այդմ էլ, նախ յիշատակուած են պարսիկները, այնուհետեւ մեդացիները, կիսսիացիները, հիւրկանները, ասորեստանցիները, խալդայները: Յաջորդաբար գալիս են բակտրիացիները, սակերը, հնդիկները, արիները, պարթեւները, քորասմները, սոգդերը, գանդարները, դադիկները, կասպերը, սարանգները, պակտիւացիները, ուտիները, միւկերը, պարիկանիները, արաբները եւ Եգիպտոսից վերեւ բնակուող եթովպացիները, հնդիկներին միացուած արեւելեան եթովպացիները, լիբիացիները: Բանակի հեծելազօրը կազմուած էր պարսիկներից, պարսիկների կողքին կանգնած սագարտիներից, մեդացիներից, կիսսիացիներից, հնդիկներից, բակտրիացիներից, կասպերից, լիբիացիներից, պարեկանիներից, ուղտեր նստած արաբներից: Նաւատորմը կազմուած էր փիւնիկեցիներից, Պաղեստինի սիրիացիներից, եգիպտացիներից, կիպրոսցիներից, կիլիկեցիներից, պամփիւլիացիներից, լիւկիացիներից, Ասիայի դորիացիներից, կարիացիներից, հոնիացիներից, [Եգէական Ծովի] կղզիաբնակներից, էոլիացիներից, հելլեսպոնտոսցիներից: Ըստ Հերոդոտի՝ Հերոդոտոսի տեղեկութիւնները Քսերքսէսի բանակի մասին հիմնուած են մի աղբիւրի վրայ, որտեղ համատեղուել են մի կողմից ժողովուրդների անունները, ջոկատների թուաքանակը եւ հրամանատարների անունները պարունակող պարսկական ցուցակը, միւս կողմից՝ ականատեսների վկայութիւնները, որոնք տալիս են հագուստի եւ սպառազինութեան նկարագրութիւնը: Քսերքսէսի բանակի մասին տեղեկութիւնները համեմատելով հարկատու շրջանների ցուցակի եւ պարսից արքաների արձանագրութիւնների հետ, որոնք վերաբերում են միջինասիական ժողովուրդներին, տեսնում ենք, որ զօրքերի թուարկման մէջ կան որոշ տարբերութիւններ: Այսպէս, վրկանները, որոնք չեն յիշատակւում սատրապութիւնների ցուցակում, առանձնացուած են որպէս առանձին ջոկատ, բակտրիացիները միացուել են սակերին, չեն յիշատակւում որոշ ցեղեր: Այս անհամապատասխանութիւնները կարելի է բացատրել այն փոփոխութիւններով, որոնք տեղի էին ունեցել Ք.ա. շուրջ 480ին (օրինակ, ցեղերի անջատուելը, սատրապութիւնների վերակազմումը եւն.)[31]:

Անշուշտ, Քսերքսէսի բանակի մասին տեղեկութիւնները հիմնուած են պարսկական պաշտօնական աղբիւրի վրայ, սակայն, ի տարբերու-

թիւն սատրապութիւնների նկարագրութեան, բանակի մասին տեղեկութիւններում Հերոդոտոսը դրսեւորում է որոշ կամայական մօտեցումներ, այսպէս ասած, որոշ հաղորդումներում կատարելով յաւելումներ եւ ճշգրտումներ՝ ի ցոյց դնելով իր բանիմացութիւնը: Օրինակ, ըստ պատմահօր, փռիւգիացիներն ու արմէնները հանդէս են գալիս մէկ հրամանատարութեան ներքոյ, ընդ որում, ինչն յաճախ է հանդիպում Հերոդոտոսի մօտ, վերջինս պատմական ակնարկի տեսքով ներկայացնում է փռիւգների, այսպէս ասած, նախապատմութիւնը եւ շատ արագ անցում կատարում արմէններին՝ նշելով, որ վերջիններս փռիւգիական վերաբնակիչներ էին եւ զինուած՝ փռիւգների նման[32]: Հեղինակի այս տեղեկութեանը մի առիթով մենք արդէն անդրադարձել ենք եւ նշել, որ Կեսար-իա-Մաժակի շրջանում հաստատուած մուշքերին, որոնք երկար ժամա-նակ գտնուել են Հայաստանի քաղաքական տիրապետութեան ծայր արեւմուտքում, եւ որոնց, ըստ պատմահայր Խորենացու, Արամ Նահապետը ստիպել էր սովորել հայերէն եւ դարձրել իր ժողովուրդը, յունական աշխարհը, իրօք, կարող էր համարել փռիւգիական վերաբնակիչներ, որոնց հետ էին նախ եւ առաջ շփուել յոյները: Հետեւաբար, Հերոդոտոսի արմէնները հենց այս մուշքերն են, եւ խօսքը սոսկ պատմական յիշողութեան մասին է[33]:

Քսերքսէսի բանակի նկարագրութեան մէջ կայ մի հետաքրքիր իրողութիւն, ինչը թոյլ է տալիս կատարել որոշ հետեւութիւններ: Այսպէս, այն բոլոր ժողովուրդները, որոնք Հերոդոտոսի կողմից նշուած են իբրեւ Աքեմէնեան Պարսկաստանի վարչական համակարգից դուրս գտնուող այսպէս կոչուած ապահարկ երկրներ կամ ցեղեր, Քսերքսէսի բանակում յիշատակւում են իրենց զօրամասերով: Այդ ժողովուրդներն են պարսիկները, եթովպացիները, արաբները, կոլխերը: Մեզ համար այս հարցում կարեւորն այն է, որ ծայրամասային ցեղերի՝ եթովպացիներ, արաբներ, կոլխեր, յիշատակումով ցոյց է տրւում Աքեմէնեան Պարսկաստանի սահմանները Քսերքսէսի կառավարման ժամանակում:

Քսերքսէսի բանակի նկարագրութիւնը կարելի է համեմատել նոյն թագաւորի «Persepolis h» արձանագրութեան հետ, որտեղ թուարկւում են հետեւեալ երկրները. «Māda : **Û**ja : Harauvatiš : Armina : Zraka : Parθava : Haraiva : Bāxtriš : Sugda : Uvārazmiš : Bābiruš : Aθurā : Θataguš : Sparda : Mudrāya : Yaunā : tya : drayahiyā : dārayatiy : utā : tyaiy : paradraya : dārayatiy : Maciyā : Arabāya : Gadāra : Hiduš : Katpatuka : Dahā : Sakā : haumavargā : Sakā : tigraxaudā : Skudrā : Âkaufaciyā : Putāyā : Karkā : Kūšiya»[34]: Այս արձանագրութեան համեմատութիւնը ***DNa***ի հետ, որտեղ Աքեմէնեան Պարսկաստանի տարածքն առաւել ամբողջական է արտացոլուած, բացայայտում է աշխարհագրական երկու նոր անուանումների ի յայտ գալը՝ Âkaufaciyā (man of Akaufaka) եւ Dahā: Âkaufaciyā բառի մէջ ā՝ մեր կարծիքով ժխտական նախածանց է, իսկ kaufa- նշանակում է «լեռ, սար» + –

iyā- ցեղանուանակերտ վերջածանց[35]: Թրակիայի եւ Լիբիայի միջեւ յիշատակուող Âkaufaciyāն տեղադրել յստակ մի վայրում՝ դժուար կը լինի: Փորձ է արուել տեղադրել այն ԺԷ. սատրապութեան կազմում՝ Աքեմէնեան Պարսկաստանի հարաւ-արեւելքում[36]: Մենք առաջարկում ենք այլ տեղադրութիւն, որը բխում է Հերոդոտոսի տեղեկութիւնների տրամաբանութիւնից: Սատրապութիւնների ցուցակում յիշատակուող մատիէնները, սասպէյրները, ալարոդները հանդէս են գալիս ԺԸ. սատրապութեան կազմում, իսկ Քսերքսէսի բանակի նկարագրութեան մէջ ալարոդները եւ սասպէյրները միաւորուած են մէկ հրամանատարութեան ներքոյ: Թերեւս ԺԸ. սատրապութիւնը, որն ըստ վերջին ուսումնասիրութիւնների գտնուել է Կուրից հիւսիս մինչեւ Կովկասեան մեծ լեռնաշղթան, արեւմուտքում սահման ունենալով Սուրամի լեռները[37], համապատասխանում է Քսերքսէսի Պերսեպոլիսեան *Ը.* կոչուած արձանագրութեան՝ Âkaufaciyāին, որը, մեր կարծիքով, նշանակում է «ոչ-լեռնցի», այսինքն՝ դաշտային, հարթավայրային երկրի բնակիչ, իսկ աւելի ուշ ժամանակաշրջանում յայտնի Աղուանք-Ալբանիան լիովին կարող էր յաւակնել նմանօրինակ բնորոշմանը: Եթէ Âkaufaciyā նշանակում է միայն «լեռնցի», ապա նոյնիսկ այդ դէպքում մեր տեղադրութեան սահմանները գրեթէ չեն խաթարուի, քանի որ էթնիկական այդպիսի բնութագրման պարագայում կ'ընդլայնուեն մեր առաջարկած տեղադրութեան աշխարհագրական սահմանները, եւ Âkaufaciyāի անուան տակ կը ներկայացնենք Կովկասեան մեծ լեռնաշղթայի ողջ տարածաշրջանում՝ ներառեալ ԺԹ. սատրապութիւնում (աւելի ստոյգ՝ արեւելեան հատուածում) ապ-րող ցեղերին, իսկ Կովկասը, ըստ Հերոդոտոսի, Աքեմէնեան Պետութեան հիւսիսային սահմանն էր[38]: Եւ տրամաբանական է, որ Կովկասի այս կամ այլ կերպ արտացոլումը արձանագրութիւնում ամբողջութեամբ համապատասխանում է Աքեմէնեան Պարսկաստանի վարչական համակարգին վերաբերող միւս աղբիւրների տեղեկութիւնների համադրմանը: Ինչ Վերաբերում է Dahāին, ապա սա անտիկ աղբիւրներում յայտնի դահերն են (Δάαι, Δάοι, Dahae)[39]: Ընդունուած է դահերին համարել սկիւթական ժողովուրդներից մէկը, սակայն չի բացառուում, որ դահերը հենց Հերոդոտոսի յիշատակած պարսկական դայէր ցեղն է, որը հեղինակի կողմից բնորոշուում է որպէս վաչկատուն ցեղ[40]: Բնականաբար, այս պարագայում դահերը կարող էին յայտնուել Կասպից Ծովի հարաւարեւելեան ափերին, եւ թերեւս դահերի նախնական բնակութեան շրջանից հեռու աշխարհագրական այլ միջավայրում հենց յայտնուելն էլ նրանց յիշատակելու պատճառն էր: Քսերքսէսից յետոյ Աքեմէնեան արքաներին ենթակայ երկրները կամ ժողովուրդները յիշատակւում են միայն Արտաքսերքսէս Բ.ի կամ Գ.ի Պերսեպոլիսի արձանագրութիւնում, որը մէջբերում ենք ամբողջութեամբ. *«1 iyam : Pārsa : 2 iyam : Māda : 3 iyam*

: Ûvja : 4 iyam : Parϑava : 8 iyam : Uvārazmⁱya : 9 iyam : Zrakā : 10 iyam : Harauvatiya : 11 iyam : Θataguiya : 12 iyam : Gadāraya : 13 iyam : Hiduya: 14 iyam : Sakā : haumavargā : 15 iyam : Sakā : tigraxaudā : 16 iyam : Bābiruš : 17 iyam : Aϑuriya : 18 iyam : Arabāya : 19 iyam : Mudrāya : 20 iyam : Arminiya : 21 iyam : Katpatuka : 22 iyam : Spardiya : 23 iyam : Yaunā : 24 iyam : Sakā : paradraiya : 25 iyam : Skudra : 26 iyam : Yauna : takabarā : 27 iyam : Putāya : 28 iyam : Kūšāya : 29 iyam : Maciya : 30 iyam : Karka : »[41]: Այստեղ թուարկուած երկրները հանդէս են գալիս հետեւեալ սատրապութիւնների կազմում. մեդացիները՝ Ժ., էլամացիները՝ Ը., պարթեւները, քորասմները, արէյները, սոգդերը՝ ԺԶ., բակտրիացիները՝ ԺԲ., սարանգները՝ ԺԴ., միւկերը՝ կա՛մ ԺԵ., կա՛մ ԺԷ., սատտագիւտները, գանդարիները՝ Է., հնդիկները՝ Ի., Աϑսրան՝ Ե., բաբելոնացիները՝ Թ., եգիպտացիները, լիբիացիները՝ Զ., հայերը՝ ԺԳ., կապադովկիացիները՝ Գ., սարդեսցիները՝ Բ., հոնիացիները՝ Ա.: Հերոդոտեան ցուցակի 20 սատրապութիւններից 13ի առկայութիւնն այս արձանագրութիւնում ակնյայտ է, իսկ մնացածների մասին մեր քննութիւնը հետեւեալն է: Արտաքսերքսէս Բ.ի կամ Գ.ի Պերսեպոլիսեան արձանագրութիւնն ամբողջութեամբ համապատասխանում է Դարեհ Ա.ի Նաղշէ Ռոստամի *Ա.* կոչուած արձանագրութեանը: Այն երկրների ու ցեղերի յիշատակութեան հերթականու-թեան չնչին տարբերութեամբ կրկնում է Դարեհ Ա.ի Սուզայի *Ե* . կոչուած արձանագրութիւնը: Անկախ այն հանգամանքից, թէ Արտաքսերքսէս Բ.ի կամ Գ.ի Պերսեպոլիսեան արձանագրութիւնն ու՞մ է պատկանել՝ Արտաքսերքսէս Բ.ի՞ն (Ք.ա. 404-358) թէ՞ Գ.ին (Ք.ա. 358-338), միանշանակ է, որ նշուած երկու տիրակալների ժամանակ էլ Աքեմէնեան Պարսկաստանը յայտնուել էր ներքին եւ արտաքին ծանր կացութեան մէջ, եւ նրանց եռանդուն ջանքերի շնորհիւ պետութիւնը վերականգնում է իր նախկին հզօրութիւնը[42]: Նշուած երկու արձանագրութիւնների աշխարհագրական եւ քանակական համապատասխանութիւնը բացատրւում է նրանով, որ ե՛ւ Արտաքսերքսէս Բ.ն, ե՛ւ Արտաքսերքսէս Գ.ն ակնյայտօրէն «իրաւունք» ունէին իրենց գործունէութիւնը համեմատել նախնի մեծն Դարեհ Ա.ի հզօրութեան հետ, քանի որ նրանց օրօք (այդ «իրաւունքը» իրաւացիօրէն իւրաքանչիւրին էլ կարող է վերաբերել) Աքեմէնեան Պարսկաստանը շարունակում էր մնալ նախկին սահմաններում:

Այժմ անցնենք մնացած երկրների տեղադրութեան հարցի քննութեանը եւ տեսնենք, թէ տուեալ երկրները ո՛ր սատրապութիւնների կազմում կարող էին հանդէս գալ: Ի սկզբանէ պարզ է, որ մի քանի երկրներ կամ ժողովուրդներ, ինչպէս օրինակ ԺԶ. սատրապութեան պարագայում, կարող էին ընդգրկուել մէկ սատրապութեան մէջ: Arabāyah հար-ցում անհրաժեշտ են պատմաաշխարհագրական էական ճշգրտումներ: Արաբների երկիրը սատրապութիւնների ցուցակում յիշատակւում է որ-

պէս ապահարկ, այն դէպքում, երբ դատելով Հերոդոտոսի տեղեկութիւններից՝ արաբները եւ միւս, այսպէս կոչուած, ապահարկ երկրները մտել են պետութեան մէջ՝ ունենալով որոշակի պարտաւորութիւններ, ինչպէս մնացած ժողովուրդները: Պատմիչը խիստ որոշակի նշում է, որ արաբները, կոլխերը, եթովպացիները ընծաներ ուղարկում են հարկերից բացի[43]: Քսերքսէսի բանակի նկարագրութիւնից յստակ երեւում է, որ հազիւ թէ վերոյիշեալ ապահարկ ժողովուրդների մասնակցութիւնը յունական արշաւանքին բարի կամքի դրսեւորում լինէր: Արաբիայի հարցում անտիկ աղբիւրների որոշ տեղեկութիւնների համադրումը բացայայտում է մի կարեւոր իրողութիւն: Այսպէս, Քսենոփոնը *Անաբասիս*ում հաղորդում է, որ Սիրիայի միջով 50 փարսախ ընթանալով՝ խոռվարար բանակը հասնում է Արաքսէս գետին[44], որը Եփրատի ձախակողմեան վտակներից մէկն է, թերեւս Խաբուրը: Նախ, այս տեղեկութիւնից պարզւում է, որ Ե. սատրապութիւնը՝ Αθυραն, տարածուել է նաեւ Եփրատի ձախափնեակում, որից հարաւ եւ հարաւ-արեւելք Արաբիան էր: Իսկ գրքի վերջում էլ, զօրավար-պատմիչը, թուարկելով անցած երկրների տիրակալներին, յիշատակում է երկու կարեւոր տեղեկութիւններ. Փիւնիկիայի եւ Արաբիայի տիրակալն էր Դեռնէսը, Սիրիայի եւ Ասսիւրիայի՝ Բելեսիւսը[45]: Սիրիան, Փիւնիկիան, Կիպրոսը Դարեհ Ա.ի օրօք կազմել են մէկ սատրապութիւն, երբ Կիւրոսի ժամանակ՝ Ք.ա. 535ին, Միջագետքը եւ Անդրգետքը, այսինքն՝ Եփրատից արեւմուտք ընկած Սիրիան, Փիւնիկիան, Պաղեստինը, կազմել են մէկ նահանգ, որը մօտ 516ին բաժանւում է երկու մասի՝ Միջագետք եւ Անդրգետք (Էբիր-նարի), իսկ արդէն Դ. դարում Անդրգետքը եւ Կիլիկիան միաւորւում են մէկ սատրապութեան մէջ[46]: Ինչ վերաբերում է Քսենոփոնի վերջին տեղեկութեանը, կարելի է ենթադրել, որ Ք.ա. Ե. դարի վերջին Ե. սատրապութիւնը բաժանուել էր երկու հատուածների՝ Սիրիա, Ասսիւրիա եւ Փիւնիկիա, Արաբիա, կամ էլ, ինչը լիովին հնարաւոր է, Դեռնէսը եղել է փոխկառավարիչ[47]:

Սիրիան եւ Ասսիւրիան՝ որպէս վարչական միաւոր, յիշատակւում են նաեւ Արիանոսի մօտ, համաձայն որի, Գաւգամելայի ճակատամարտին Մազէյը առաջնորդում էր «Կոյլէ-Սիրիայի եւ երկու գետերի միջեւ ընկած Սիրիայի սիրիացիներին»[48]: Այս տեղեկութիւնը նշանակում է, որ Ե. սատրապութեան թերեւս ենթաշրջան հանդիսացող Կոյլէ-Սիրիա[49] - Սիրիան (իմա՛ Αθυρα) Աքեմէնեան տէրութեան անկման պահին դեռեւս մնում էր, ինչպէս Ք.ա. Ե. դարի վերջին, վարչական մէկ միաւոր՝ հիւպարքիա: Արաբների մասին պահպանուած տեղեկութիւնները թոյլ են տալիս կատարել հետեւեալ եզրակացութիւնները: Այսպէս, Հերոդոտոսը յայտնում է, որ Պսամմետիքոս թագաւորի օրօք կայազօրներ հաստատուեցին եթովպացիների դէմ Ելեփանտինէ քաղաքում, արաբների եւ ա-

սորեստանցիների դէմ՝ Դափնէում, որը Պելուսիայում է, եւ Լիբիայի դէմ՝ Մարիայում[50]: Մէկ այլ տեղեկութեան մէջ պատմիչը հաղորդում է, որ արաբների եւ ասորեստանցիների թագաւոր Սանաքարիբը (իմա՛ Սենեքերիմ) արշաւում է Եգիպտոս[51]: Մէջբերուած երկու տեղեկութիւնները թոյլ են տալիս կատարել երկու հետեւութիւններ. արաբները Եգիպտոսի ծայր հիւսիս-արեւելքում, Պելուսիայի շրջանում սահմանակցել են Եգիպտոսին, կամ էլ ասորեստանցիների հետ արաբների համատեղ յիշատակուելը ցոյց է տալիս, որ խօսքը գնում է ասորեստանցիներից եւ արաբներից կազմուած պետական կազմաւորման մասին: Սակայն Հերոդոտոսի միւս տեղեկութիւնները հնարաւորութիւն են տալիս առաջնութիւնը տալ առաջին եզրակացութեանը, քանի որ պատմիչի միւս տեղեկութիւններից պարզւում է, որ արաբներն իրօք Պաղեստինեան Սիրիա կոչուած երկրի առափնեայ փոքր հատուածում դուրս են եկել Միջերկրական ծով: Համաձայն Հերոդոտոսի՝ Կադիւտիս քաղաքից մինչեւ Ենիւսոս քաղաքը ընկած ծովափնեայ նաւահանգիստները պատկանում են արաբներին[52]: Ընդ որում, Փիւնիկիայից մինչեւ Կադիւտիս քաղաքը պաղեստինեան սիրիացիների երկիրն է[53]: Կադիւտիս քաղաքը համապատասխանում է Գազային, իսկ պաղեստինեան սիրիացիները՝ փղշտացիներին: Եգիպտոսի եւ Սիրիայի սահմանը կազմել է Կասիոն լեռը, որը ձգուել է Սերբոնիս լճի մօտով[54]: Ենիւսոսից մինչեւ Սերբոնիս լիճը Հերոդոտոսը կրկին համարում է սիրիական հողեր[55]: Կասիոն լեռը եւ Սերբոնիս լիճը Պելուսիայից արեւելք՝ որպէս Եգիպտոսի մասեր, յիշատակւում են նաեւ Ստրաբոնի մօտ[56]: Ստրաբոնը նոյնպէս որոշ դէպքերում Կասիոն լեռը կա՛մ համարում է Փիւնիկիայի մաս, կա՛մ էլ Փիւնիկիային անմիջականօրէն սահմանակից[57], ինչն, ըստ երեւոյթին, պայմանաւորուած է Ստրաբոնի կողմից աւելի վաղ շրջանից եկող աղբիւրների օգտագործմամբ: Մէկ այլ կապակցութեամբ էլ Սիրիայի առափնեայ հատուածը համարուել է արաբական երկիր, որը բնակեցրել են սիրիացիները[58]: Սա այն հատուածն է, որը գտնուել է Կադիւտիսի եւ Ենիւսոսի միջեւ:

Կադիւտիսի կամ Գազայի մասին հետաքրքիր տեղեկութիւններ ունի նաեւ Արիանոսը, թէ՝ Գազան Փիւնիկիայից Եգիպտոս տանող ճանապարհի վերջին քաղաքն է, անապատի սկզբին, որի կառավարիչ Բատը, հաւաքելով վարձկան արաբների, ուժեղ դիմադրութիւն է ցոյց տալիս Ալեքսանդրին: Միեւնոյն ժամանակ Արիանոսը Գազան համարում է Պաղեստինեան Ասորիքի քաղաքներից մէկը[59]: Ռուփոսը նոյնպէս գրում է, որ Գազայում մակեդոնացիներին դիմադրում են պարսիկները եւ արաբները[60]: Ինչպէս երեւում է Արիանոսի ուղղակի եւ Ռուփոսի անուղղակի տեղեկութիւններից, Գազան հանդիսացել է Փիւնիկիայի սահմանային քաղաքը, որից յետոյ Եգիպտոսն էր: Պարզւում է, որ

վարչական առումով Պաղեստինեան Սիրիան մտել է Փիւնիկիայի մէջ, այն դէպքում, երբ դատելով Հերոդոտոսի սատրապութիւնների մասին տեղեկութիւններից՝ Պաղեստինեան Սիրիան նախապէս եղել է Ե. սատրապութեան ենթաշրջաններից մէկը: Ընդ որում, Փիւնիկիան եւ թերեւս Արաբիան, ինչպէս Քսենոփոնի օրօք, Ք.ա. Դ. դարի վերջերին եւս շարունակում էին մնալ որպէս առանձին վարչական միաւոր: Ռուփոսի մի տեղեկութիւնից էլ յայտնի է դառնում, որ Տիւրոս քաղաքի պաշարման ժամանակահատուածում Ալեքսանդրը զօրքի մի մասով արշաւում է Արաբիա, այն դէպքում, երբ Արիանոսի հաղորդումից պարզւում է, որ Ալեքսանդրը արշաւանք է կազմակերպում այն Արաբիայի դէմ, որը գտնւում էր Անտիլիբանանեան կոչուող լեռան մօտ[61]: Անտիլիբանանեան կոչուող լեռները գտնուել են Սիդոնի մօտ, որոնք Լիբանանեան լեռների հետ ձգուել են մինչեւ Արաբական լեռները, որոնք բարձրանում են Դամասկոսեան լեռների վրայ[62]: Մէկ այլ տեղում էլ Ռուփոսը յիշատակում է այսպէս կոչուած Լիբանանեան լեռները, որտեղ վայրի արաբները յարձակուել եւ սպանել էին երեսուն մակեդոնացիների[63]: Բերուած տեղեկութիւնների համադրումից պարզւում է, որ Արաբիան կամ աւելի ստոյգ՝ նրա մի մասը, գտնուել է Դամասկոսի հարեւանութեամբ, ընդ որում, կարելի է եզրակացնել, որ Աքեմէնեան Պարսկաստանի համար ստեղծուած ծանր կացութեան պայմաններում արաբները շարունակե-լով մնալ որպէս դաշնակիցներ կամ վարձկաններ, օգնում են պարսիկ-ներին, եւ միայն Ալեքսանդրի անմիջական ճնշման տակ նրանց այն հատուածը, որը գտնւում էր Դամասկոսից արեւելք, ենթարկւում է մակեդոնացիներին: Դամասկոսը Աքեմէնեան տէրութեան կարեւորագոյն քաղաքներից մէկն էր[64], որտեղ գտնուել է նաեւ պետական գանձարաններից մէկը: Ռուփոսը Դամասկոսը յիշատակում է որպէս Ասորիքի քաղաքներից մէկը, սատրապական նստավայր[65]:

Ստացւում է, որ Արաբիան, մեր կարծիքով, տեղադրւում է Պալմիրայի շրջանում, եւ այս առումով Քսենոփոնի այն տեղեկութիւնը, թէ Կիւրոս Կրտսերի բանակը Արաքսէս գետն (հաւանաբար Խաբուրն է) անցնելուց յետոյ ճանապարհը շարունակում է Արաբիայի միջով[66], սխալ չէ եւ համապատասխանում է տուեալ ժամանակի իրողութեանը: Արաքսէս գետից անդին յիշատակուած Արաբիան աշխարհագրօրէն համապատասխանում է ուշ ժամանակաշրջանի հին հեղինակներից Ստրաբոնի սկենիտ կոչուած արաբների բնակութեան տարածքների մասին տեղեկութիւններին[67], որոնց ներթափանցումը Եփրատի ձախափնեակ սկըսուել էր դեռեւս Աքեմէնեան դարաշրջանում: Ընդ որում, դատելով Քսենոփոնի որոշ տեղեկութիւններից, հենց Արաբիայով յոյների անցումն էլ պայմանաւորել է այն վկայութեան յիշատակութիւնը, թէ Փիւնիկիան եւ Արաբիան եղել են մէկ վարչական միաւոր: Քսենոփոնը նշում է, որ Կի-

լիկիայի եւ Սիրիայի սահմանն այն դարպասն էր[68], որն աւելի ուշ յայտնի է Ամանոսեան Դրունք անունով: Այստեղից Կիւրոսի բանակը հինգ փարսախ շարժւում է մինչեւ փիւնիկեցիներով բնակեցուած Միւրիանդոս ծովափնեայ քաղաքը, եւ փաստօրէն ճանապարհի մնացած ուղին մինչեւ Արաքսէս գետը Քսենոփոնը համարում է Սիրիա[69]: Փիւնիկեցիների յիշատակումը տուեալ հատուածում միանշանակ հիմք չի կարող լինել այն պնդման՝ թէ Փիւնիկիայի սահմանը հիւսիում այդքան ընդարձակուել էր: Սա պարզապէս նշանակում է, որ Միւրիանդոսը փիւնիկեցիների կողմից հիմնադրուած քաղաք էր Փիւնիկիայի սահմաններից դուրս: Ասուածից ենթադրում ենք, որ Կիւրոսի բանակը բնաւ չի անցել Փիւնիկիայով, եւ հենց Արաբիայի տարածքով անցնելուց յետոյ միայն Քսենոփոնը յիշատակում է Փիւնիկիայի եւ Արաբիայի կառավարիչ Դեռնէսին՝ որպէս մէկ վարչական միաւորի տիրակալ:

Փաստօրէն հին պարսկական սեպագիր արձանագրութիւնների Արաբիա երկիրը համապատասխանում է Դամասկոսից արեւելք՝ մինչեւ Եփրատի ձախափնեակ ընկած տարածքին, որը պայմանաւորուած էր Աքեմէնեան արքաների՝ արաբների նկատմամբ տարուող յատուկ քաղաքականութեան: Արաբների հաւատարմութիւնը պարսից արքաներին, ինչպէս տեսանք վերեւում, երեւաց նոյնիսկ պետութեան կործանման ժամանակաշրջանում: Ընդ որում, այս Արաբիան՝ որպէս վարչական միաւոր, ունէր իր տնտեսական եւ ռազմական յստակ պարտաւորութիւնները պետութեան նկատմամբ, ինչպէս միւս սատրապութիւնները: Սակայն, ըստ էութեան, կար նաեւ մէկ այլ Արաբիա, որն արաբներ էթնանուան ներքոյ դաշնակցային յարաբերութիւնների մէջ էր Աքեմէնեան Պետութեան հետ: Այս արաբներին մենք կ'անուանենք հարաւային՝ ի տարբերութիւն հիւսիսայինի:

Վերեւում ցոյց տուեցինք, որ արաբները Կադիւտիսի եւ Ենիւսոսի միջեւ դուրս էին եկել Միջերկրական Ծով, ընդ որում արաբների քաղաքական իշխանութիւնը այդ հատուածում պայմանաւորուած էր առեւտրական նկատառումներով, եւ թերեւս անմիջական առեւտրական հաղորդակցութիւնը մերձծովեան շրջանից նաբաթէական Պետրայի միջոցով շարունակւում էր Արաբական թերակղզու խորքերը: Հենց Կամբիւսէսն էլ Եգիպտոսը նուաճելու համար խնդրում եւ ստանում է այս շրջանների արաբների թագաւորի օգնութիւնը եւ անցնելով նրանց երկրով՝ նուաճում Եգիպտոսը[70]: Այս օգնութեան շնորհիւ էլ արաբները, որոնք ըստ երեւոյթին նաբաթէացիք են[71], համարուեցին պարսիկների դաշնակիցները եւ հաւանաբար պահպանեցին մինչ պարսիկների կողմից Եգիպտոսի նուաճումն ունեցած առեւտրական տիրապետութիւնը Միջերկրական Ծովի առափնեայ փոքր հատուածում, ինչը բխում էր նաեւ Աքեմէնեան Պետութեան շահերից: Եւ հենց այս արաբներին նկատի

ունի Հերոդոտոսը, երբ նշում է, որ Դարեհին, բացի արաբներից, ենթարկւում էին Ասիայի բոլոր ժողովուրդները, որոնց երկիրը ապահարկ էր[72]: Նկատի ունենալով, որ արեւելքում Եգիպտոսի սահմանը հասել է մինչեւ Սերբոնիս Լիճը, կարելի է ընդունելի համարել, որ արաբների իշխանութիւնը տարածւում էր նաեւ Սինայի Թերակղզու վրայ, ընդ որում Ենիւսոսից մինչեւ Սերբոնիս Լիճը Հերոդոտոսը կրկին աշխարհագրական առումով համարում է սիրիական հողեր, որոնք տուեալ ժամանակում (Կամբիւսէսի եգիպտական արշաւանքի ժամանակ) նոյնպէս պէտք է գտնուէին քոչուոր արաբների վերահսկողութեան տակ: Բերուած տեղեկութիւնների քննութիւնից պարզւում է, որ եթէ Հերոդոտոսի ժամանակ Փիւնիկիան հարաւում հասել է մինչեւ Սերբոնիս Լիճը եւ Կասիոն Լեռը, ապա Ալեքսանդրի արշաւանքի ժամանակ Ե. սատրապութեան հարաւային սահմանը հասնում էր մինչեւ Գազա, այսինքն՝ եգիպտական սատրապութիւնը հիւսիս-արեւելքում ընդարձակուել էր ի հաշիւ հարեւան սատրապութեան տարածքների: Այս բացատրութիւնն էլ իր հերթին ցոյց է տալիս, որ Սինայի Թերակղզին կամ գոնէ նրա հիւսիսային մասը սկզբում միացուած է եղել Ե. սատրապութեանը, իսկ յետոյ թերեւս Դ. դարի երկրորդ կէսերից՝ եգիպտական սատրապութեանը:

Ի մի բերելով վերը կատարուած քննութեան արդիւնքները՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ Աքեմէնեան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգի հիմքում դրուած էր տարբեր ժողովուրդների միաւորումով մէկ ամբողջութիւն՝ միութիւն ստեղծելու գաղափարը, որը շուրջ երկուհարիւր տարի պահպանուեց պասարգադների ցեղից սերող Աքեմէնեան տոհմի գլխաւորութեամբ: Միեւնոյն ժամանակ ցոյց տրուեց, որ Աքեմէնեան արքաների արձանագրութիւններում յիշատակուող երկրները չեն արտացոլում կայսրութեան վարչական բաժանման համակարգը եւ ներկայացնում են հպատակ երկրները, չնայած որ հենց այդ երկրները կազմում էին սատրապութիւնները եւ իրենց յիշատակութեամբ հիմնականում ներկայացնում են կայսրութեան գլխաւոր կամ հիմնական ժողովուրդներին: Պարզուեց, որ վարչական առումով Աքեմէնեան Պարսկաստանը բաժանուած էր 21 սատրապութիւնների, ընդ որում, ԻԱ.՝ Սկուդրա սատրապութիւնը ձեւաւորուել էր Դարեհի կողմից համապետական վարչական վերափոխումներ ձեռնարկելուց քիչ աւելի ուշ, ըստ այդմ էլ տեղ չի գտել Հերոդոտոսի ցուցակում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] "Satrap", *Pauly's Real-Encyclopädie der Classischen Altertumswissenschaft*, München, 1921, էջ 82-188:

[2] Հերոդոտոս, *Պատմութիւն Ինը Գրքից*, թրգմ. Ս. Կրկեաշարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1986, III, 89-97. նաեւ՝ *Herodotus* (With an English translation by A. D.

Godley), V. II, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1957, էջ 116-127:

[3] J. Junge, *Saka-Studien*, *Der ferne Nordosten im Weltbild der Antike*, Leipzig, 1939, էջ 44, 90:

[4] B. A. Turayev, *Istoriya Drevnego Vostoka* (Հին Արեւելքի պատմութիւն), *T. II*, Լենինկրատ, 1935, էջ 138. նաեւ՝ V. V. Masson, *Drevnezemledevcheskaya Kultura Margyani, Materyali I Isledovaniya Po Arkheologii SSSR* (Մարերի հնադարեայ աշխարհագրագիտական մշակոյթը, հնագիտութեան նիւթեր եւ ուսումնասիրութիւններ), Vip. 73, Մոսկուա-Լենինկրատ, 1959, էջ 148. նաեւ՝ I. M. Diakonov, *Ocherki Istorii Drevnego Irana* (Ակնարկներ հնադարեայ Իրանի պատմութեան), Մոսկուա, 1961, էջ 92:

[5] A. T. Olmstead, *History of the Persian Empire*, Chicago, 1948, էջ 291. նաեւ՝ Masson, էջ 149. նաեւ՝ *Istoriya Tadjikskogo Naroda* (Տաճիկական ժողովրդի պատմութիւն), *T. I*, Մոսկուա, 1963, էջ 206:

[6] I. M. Diakonov, *Istoriya Midii* (Մարաստանի պատմութիւն), Մոսկուա-Լենինկրատ, 1956, էջ 340 եւ՝ յետ. նաեւ՝ *Istoriya Tadjikskogo,* էջ 158:

[7] F. Altheim, *Weltgeschichte Asiens Im Griechischen Zeitalter*, *T. I*, Հալլէ, 1947, էջ 142:

[8] Diakonov, *Istoriya Midii*, էջ 342 եւն.:

[9] E. Herzfeld, *The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East*, Վիսպատէն, 1968, էջ 288, 292, 296:

[10] Մեդիմնոս-տարողութեան չափ **սորուն** մարմինների համար, որն օգտագործում էին հին Յունաստանում: Ատտիկեան մեդիմնոսը հաւասար էր մօտաւորապէս 52,5 լիտրի:

[11] Հերոդոտոս, III, 89-97:

[12] «Դարեհ Վշտասպի Բիսեթունեան Արձանագրութիւնը» (թրգմ. բնագրից, առաջաբան եւ ծնթ. Գ. Նալբանդեանի), Երեւան, 1964, էջ 8. նաեւ՝ R. Kent, *Old Persian. Grammar. Texts. Lexicon*, 2nd ed., New Haven, 1953, էջ 119. նաեւ՝ *Les Inscriptions de la Perse Achéménide, Traduit du Vieux Perse, de l'Élamite, du Babylonien et de l'Araméen*, présenté et annoté par Pierre Lecoq, Paris, Gallimard, 1997, էջ 188:

[13] Հերոդոտոս, III, 97:

[14] Բաբկէն Յարութիւնեան, «Աքեմէնեան Պարսկաստանի XVIII Սատրապութեան Տեղադրութեան Շուրջ», *Հանդէս Ամսօրեայ,* Վիեննա, 1999, թիւ 1-12, էջ 96-97. նաեւ՝ Յովհաննէս Խորիկեան, «Աքեմէնեան Պարսկաստանի XI Եւ XV Սատրապութիւնների Տեղադրութեան Շուրջ», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2006, թիւ 1, էջ 147-157:

[15] Kent, էջ 127:

[16] Նոյն, էջ 123:

[17] Նոյն, էջ 127:

[18] Նոյն, էջ 123, 127:

[19] Հերոդոտոս, III, 96:

[20] M. A. Dandamayev, *Politicheskaya Istoriya Akhemenedidskoy Derjavii* (Աքեմենեան Պետութեան քաղաքական պատմութիւն), Մոսկուա, 1985, էջ 108-109. նաեւ՝ Հերցֆելդը Հնդկաստանի նուաճումը թուագրում է Ք. ա. 519-518ին (E. Herzfeld, "A New Inscription of Darius from Hamadan", *Archaeological Survey of India.*

Memoires, N 34, Calcutta, 1928, էջ 2), իսկ Օլմսթէդը՝ Ք ա. 513ին (Olmstead, էջ 145): Ստրուվէն՝ Ք.ա. 514ին, 516-515ին արշաւանքի նախապատրաստութիւնն էր (V. V. Struve, *Etyudi Po Istorii Severnogo Prichernomoriya, Kavkaza I Sredney Azii* (Ուսումնասիրութիւններ Հիւսիսային Մերձսեւծովեան, Կովկասի եւ Միջին Ասիայի պատմութեան), Լենինկրատ, 1968, էջ 102):

[21] Dandamayev, էջ 282:

[22] Dandamayev, *Iran Pri Pervikh Akhemenidakh (VI v. do. N. E.)* (Իրանը Աքեմենաեան վաղ շրջանին, Ք.ա. Զ. դար), Մոսկուա, 1963, էջ 80:

[23] Kent, էջ 136:

[24] Նոյն, էջ 137:

[25] Kent, էջ 136:

[26] Այս արշաւանքը դնում են Ք.ա. 516ի եւ 512ի միջեւ (Dandamayev, *Politicheskaya*, էջ 109, 111):

[27] Dandamayev, *Politicheskaya,* էջ 111 (Շեմերէնիին ենթադրում է, որ *Skudra* նշանակում է այն սկիթական ցեղերը, որոնք ապրում էին Մակեդոնիայում կամ Թրակիայում (O. Szemerényi, *Four Iranian Ethnic Names: Scythian-Skudra-Sogdian-Saka*, Wien, 1980):

[28] M. A. Dandamayev, V. G. Lukonin, *Kultura I Ekonomika Drevnego Irana* (Հին Իրանի մշակոյթը եւ տնտեսութիւնը), Մոսկուա, 1980, էջ 111:

[29] Հերոդոտոս, VII, 100:

[30] Նոյն, VII, 61-96. նաեւ՝ *Herodotus*, V. III, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1957, էջ 374-399:

[31] Herzfeld, *The Persian Empire*, էջ 310:

[32] Հերոդոտոս, VII, 73:

[33] Բարկէն Յարութիւնեան, *Հայաստանի, Հայ-Իրանական Յարաբերութիւնների Եւ Առաջաւոր Ասիայի Հնագոյն Պատմութեան Մի Քանի Խնդիրների Շուրջ (մ. թ. ա. VII-VI դ.դ.),* Երեւան, 1998: Հմմտ.՝ Յ. Խորիկեան, «Սատրապական Հայաստանի Արեւմտեան Եւ Հարաւային Սահմանները մ.թ.ա. VI-IV Դարերում», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2005, թիւ 3, էջ 181:

[34] Kent, էջ 151:

[35] Նոյն, էջ 165, 178:

[36] Lecoq, էջ 138: Հերցֆելդը գրում է. *"the Akōfaçiya lived in southern Lāristān and Kirmān on the Indian Ocean"*, իսկ մէկ այլ տեղում էլ գրել էր, որ *"the Qufs, Kōç, inhabitants of the Bashākird mountains between Hormuz and the Kōh i Bāriç, appear in Xerx.Pers. daiv. as OP. akōfaçiya > kōfiç (qufs) > kōhiç > kōç, from OP. kōfa «mountain», *kōfaka «mountaineer"* (Herzfeld, էջ 300-301, 365): Օլմսթէդը Akaufakaն (the Mountain Land) տեղադրում է ներկայիս Աֆղանստանում՝ Քաբուլից հիւսիս (Olmstead, էջ 231):

[37] Յարութիւնեան, «Աքեմէնեան Պարսկաստանի», էջ 45-114:

[38] Հերոդոտոս, III, 97:

[39] *Pauly's Real-Encyclopädie der Classischen Altertumswissenschaft*, Stuttgart, 1958, s. v. Daai, S. 1945-1946:

[40] Հերոդոտոս, I, 125:

[41] Kent, էջ 155-156: 5-7րդ տեղերում պէտք է յիշատակուեն արէյը, բակտրիացին, սոգդիացին (նոյն, էջ 156). նաեւ՝ Lecoq, էջ 271:

[42] Տե՛ս, օրինակ, Վ. Բայբուրդեան, *Իրանի Պատմութիւն (Հնագոյն ժամանակներից Մինչեւ Մեր Օրերը)*, Երեւան, 2005, էջ 57-58:

[43] Հերոդոտոս, III, 97:

[44] Քսենոփոն, *Անաբասիս* (թրգմ. Ս. Կրկեաշարեան), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 20:

[45] Նոյն, էջ 197:

[46] Dandamayev, V. G. Lukonin, էջ 111-112:

[47] Herzfeld, էջ 306:

[48] Arrian, *Anabasis Alexandri* (With an English translation by E. Iliff Robson), V. I-II, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1958-1961, III, 8; 11, էջ 246, 257. նաեւ՝ Arrian, *Pokhod Aleksandra* (Perevod S Drevnegrecheskogo M. E. Sergeyenko) (Աղեքսանդրի արշաւանքը, թարգ. Մ.Ե. Սերգէյենկօ, հին յունարէնից), Մոսկուա-Լենինկրատ, 1962, III, 8; 11. նաեւ՝ Արիանոս, «Ալեքսանդրի Արշաւանքը», *Ալեքսանդր Մակեդոնացի*, Երեւան, 1987, էջ 97, 101:

[49] Ըստ Ստրաբոնի՝ Կելեսիրիան լայն առումով տարածւում էր մինչեւ Եգիպտոս եւ Արաբիա, իսկ նեղ առումով՝ Լիբանանեան եւ Անտիլիբանանեան լեռների միջեւ (Strabon, *Geografiya V 17 Knigakh* (Աշխարհագրութիւն 17 գրքով), Perevod, Statya I Komentari G. A. Stratanovskogo, 1964, էջ 699-700):

[50] Հերոդոտոս, II, 30:

[51] Նոյն, II, 141:

[52] Նոյն, III, 5. նաեւ՝ Herodotus, III, 5, էջ 8-9: Հերոդոտոսի երկի ռուսերէն հրատարակութեան մէջ թարգմանուած է «արաբների թագաւորութեանը», ինչը խօսում է արաբների ոչ թէ էթնիկական ներթափանցման, այլ ինչ-որ ցեղային իշխանութեան քաղաքական սահմանների մասին (Gerodot, *Istoriya V Devyati Knigakh* (Պատմութիւն 9 գրքով), Perevod I primechaniya G. Stratanovskogo, Լենինկրատ, 1972, էջ 139):

[53] Հերոդոտոս, III, 5:

[54] Նոյն, II, 6; III, 5:

[55] Նոյն:

[56] Strabon, էջ 58, 65, 702: Առանձին դէպքերում Ստրաբոնը Սերբոնիս Լիճը շփոթում է Մեռեալ Ծովի հետ (նոյն, էջ 703-704, 707):

[57] Նոյն, էջ 65, 703:

[58] Հերոդոտոս, II, 12:

[59] Արիանոս, էջ 86-87:

[60] Ռուփոս, «Ալեքսանդր Մակեդոնացու Պատմութիւնը», *Ալեքսանդր Մակեդոնացի*, Երեւան, 1987, էջ 333: Տե՛ս նաեւ՝ Kvint Kurtsii Ruf, *Istoriya Aleksandra Makedonskogo* (Աղեքսանդր Մակեդոնացու պատմութիւնը), Մոսկուա, 1963, էջ 93. նաեւ՝ Rufus Curtius Quintius, *History of Alexander* (With an English transl. by John C. Rolfe), V. I-II, Loeb Classical Library, Cambridge-Massachusetts-London, 1956, էջ IV, VI, 21:

[61] Ռուփոս, էջ 319-320. նաեւ՝ Արիանոս, էջ 79:

[62] Strabon, էջ 699.

[63] Ռուփոս, էջ 319: Այս հատուածում խօսքը գնում է թափառական արաբների մի խմբի մասին, որը հասել էր մինչեւ Լիբանանեան լեռների շրջանը, չնայած համաձայն Պլուտարքոսի՝ արաբները բնակւում էին Անտիլիբանանեան լեռներում, ինչն աւելի ճիշտ է (Plutarkh, *Aleksandr*, *XXIV.-Izbranniye Jizneopisaniya* (Աղեքսանդր ԻԴ.-ընտիր կենսագրութիւն), *T. II*, Մոսկուա, 1987):

[64] Տե՛ս օրինակ՝ Արիանոս, էջ 68, 73:

[65] Ռուփոս, էջ 295, 310:

[66] Քսենոփոն, էջ 20:

[67] Strabon, էջ 686, 693-694, 708:

[68] Քսենոփոն, էջ 17:

[69] Նոյն, էջ 18-20:

[70] Հերոդոտոս, III, 5-9:

[71] Նաբաթէացիների մասին մանրամասն տե՛ս՝ Strabon, էջ 703, 718, 720, 740:

[72] Հերոդոտոս, III, 88, 91:

HERODOTUS' LIST OF THE SATRAPIES (A HISTORICO-GEOGRAPHIC STUDY)
(SUMMARY)

HOVHANNES KHORIKIAN
hovhkhor78@mail.ru

The author highlights the importance of Herodotus' list of the Satrapies for the study of the administrative divisions of the Achemenian state. The author notes that there are diverse, controversial claims about the sources of this list.

The comparison of Herodotus' list with information of antique and ancient Persian cuneiform inscriptions discloses historico-geographical facts, which have significant importance for the study of the history of the Achemenian state and of those people who were incorporated into it.

The multifaceted examination of the sources shows that during the two centuries of the Achemenide state the Satrapies underwent administrative re-formations, which aimed at consolidating the power of the Persian administration and securing the regular payment of taxes.